

54. ԲԺԻՇԿ ԼՈՒՄԱՆ

Ատանու էրկիրը տասնը հինգ տարվա տղա մի կըլլի. ամեն օր կէրթա ավը. մեկ օր կառնե լավ արզև մի, իլաճը կը կըյրի, քար մի կէրևա, գընըց հասավ քարը. տեսավ օ մաղարա մի է, մտավ մաղարան, տեսավ օ մի աղկեկ օձ, մի մարդ նստուկ. գոտուն ի վեար օձ, վեր մարդ, գլոխը թագավորի գլխուն. փյուսկյուլն էալ խաչ, մորուքն էալ ճերմակ:

Տղան թրչեր էր, ջուրը ոռնի վեար կը կաթեր, կրակը վառեց, վրուն լաթերը հանեց, քըմեց, բերեց չորցոց. էադ մորվոք մարդը աջուկ ձեառքը զարկեց տղի կռնըկին օրթալախ տեղը, նշան էղավ, տղան ինքը իր մտոքը ըսըց. «Կրակը բարկ է»: Ավը քեպապ ըրըց, մի քիչ կըյրեց, իրան առավ, մեկալը քուլլին դրեց էան մորվոք մարդուն առաջ օ կերավ. մնացածը՝ էրկու մատը վերոց, կային չորս հատ օձեր, քաշեքաշ առին, գընցին, մտան ծակը:

Ծերունին ըսըց. - Տղա՛ս, կերակուրը տվողը ջուր էալ տի տա:

Տիկը փչեց, փաչանին կապեց, նետեց շալակը, ընկավ ճանփա: Գընըց հասավ հորուն գլոխը. լեցոց, շալկեց էկավ. քարը փորեց, ջուրը լցեց. էկան ներսեն հինգ տախիրա օձ, խմեցին գընցին:

Ըսըց ծերունին. - Տղա՛ս, ես ծարավ պապակա. ինձի ինչո՞վ տի տաս:

Բերեց չամրե մեկ չանախ մի շինեց. տվեց, ծերունին խմեց: Իրեք օր, իրեք գիշեր արզև չկըյրվավ. տղան մաղարեն չկրցավ էլլըր:

Ծերունին ըսըց. - Մոտիկ տեղ չե՞ս կրնըր ջուր մի հաներ ինձի:

Վեց օր մաղարի վերդին աշխատեցավ. ծակեց, ջուրը հանեց մաղարին մեջ. ըրըց հավուզը. ճերանը մորթեց, կրակը վառեց, զարկեց շիշը, ըսըց. - էաս քու քերակուրդ է. էփավնը՝ կեր, ես տ'էրթմ, իգամ:

- Չեմ ավատար օ գաս, ըռեհին մի տուր:

Տղան տվեց ապան ու գնըց. օլրտավ մինչև կեսօր. չորս հատ առավ, էկավ ծերունին քով, կերան, խմեցին: Մատը վերոց կինե, էնոք էկան, ճաղպեց էնոց:

- Կեցիր բարով, - ըսըց տղան, - տ'էրթըմ:

Ծերունին գընըց. ներսեն քար մի բերեց, տվեց տղին, ըսըց. - Տղա՛, չտանիս մարդու տաս. զանն ինիս ճնճղուն հավկիթ է. անգին քար է ըդիկա, ըդոր մարաֆեթը՝ գիշերը կը վառի ճրագի տեղ, ցորեկը կապոտ կտավի մեջ կը դնես:

Ծերունին տղին թևեն բռնեց. նստեցոց, ըսըց. - Որդի՛ս, դու էղար իմ զավակը, դուն ինձիս կերակրեցիր, ինձի ջուր հանեցիր. միտքդ պեյե. օ մարդու առաջ չպտի լոգնաս, մարդ կռնակդ չպտի տեսնա:

Տղան ընկավ ճանփա, էկավ ինք իր տունը, քարը ծախեց Ֆրենկիստան, իրան պարտքը տվեց, տունը շինեց, քառսուն հատ օխչար առավ. շըտկվավ դեպի ծերունին: Գնըց. համբուրեց ձեռքը, օխչարները մորթեց, ինչ օ օձ կար, կերոց, իրան էալ գառ մի մորթեց, քեպապ ըրըց, տարավ դրեց առջին:

Ծերունին էլավ, քար մի բերեց, դրեց տղի առջին:

- Ի՛նչ մարդ օ տեսնա քեզ, իմ անունս չտաս, ես օձերուն թագավորն իմ. անունս Շահ Մարար է:

Տղան ձեռքը, օտքը համբուրեց, ընկավ ճանփա:

Շահ Մարար մատը վերոց. էկան չորս հատ օձ. էրկուքը առանջ կէրթային, էրկուքը էտևը. ճանփու.կը դնեին տղին:

Տղան ըսըց. - Շնորհակալ իմ:

Օլրվան, տղուն օտքը լըզեցին:

Ատանու թագավորը շատ դժար հիվնդցավ. աշխարհքը հեքիմ չմընըց, բերին: Ցավուն զորութան՝ մե մի աջուկ փիճին՝ մե մի չոլախ փիճին վրան մենծ եարա էլավ օ մեկ օխա կար: էադ եարան իրան միսը կուտեր, օր ավուր վրա կը չուխուրնար: Ֆրենկիստանու հեքիմ մի կար հոտի, ըսըց. - էրկու հավ մորթեցեք:

էրկու հավ մորթեցին, բյումբյուլը փետեցին, բերին դրին եարին վրա. մի մարդ չպոխ խմելու չափ թագավորը հանգչավ, ցավը զոռ ըրըց կինե, քակեցին օր, հավը կերած է եարան:

Օրը քառսուն հավ կը կապեին հավերը կուտեր ու թագավորի մսեն էալ կուտեր:

Էադ թագավորին անունն էր Կյուն օ Ատանու հիմը ցգեց, իրան անը-վով իրան էրկիրը Կուլիկու կըսվին:

Հեքիմներու մեջ մի եահուտի կար, էնոր պես չէր գըտնվեր աշխարհ-քը, շատ հասկնող էր: Էաս եահուտին գընըց թագավորին վրա, տեսավ եարան:

Թագավորը ըսըց. - Հեքի՛մպաշի, իմ եարան տի սաղցընիս, թե չէ:

- Իմ ըսած դեդն օ ըլլի, մի սահաթվա կը հանիմ օտաց վրա, թագա-վո՛ր ապրած, իրավունք տուր ինձի իրեք օր: Թագավորը վրու նշանը տվեց հեքիմին:

- Իրեք օր չէ, ամ՚իս մի քիզի ժամանակ, թեքի ինձիս սաղցուր:

Դելալ կանչել տվեց հեքիմը, հերքեշ լսեցին օ հեքիմը իրեք օր իրա-վունք է առած: Կանչեց ժողովուրդին. - Էգուկի, որձի մարդ չպտի մնա. տի գա:

Հեքիմպաշին մտավ թեյնա օդա մի, րեմ նետեց, հասկցավ, գալողը չլպղցոց, կռնակը հայավ ու սեապեց, քուլլին հայավ ու սեապեց: Մարդ ղրկեց, էան տղան գտան իրան տունը: Չըլպղցոց օ Շահ Մարարին մեռ-յուրը կռնակն է. ընի մազոտ էր, տղան էալ էնանկ է:

Թագավորին իմցուցին. - Ավճի Փուրթո մի կա, էան տ' էրթա Շահ Մուրարին տի բերե, չէ նե, կը մեռնի:

- Կանչեցեք գա, Ավճի Փուրթոյին:

Ավճի Փուրթոն էկավ. գլոխ տվեց թագավորին:

- Որդի՛, - ըսըց թագավորը, - հոգիս խալըսե:

- Իլաճը չկա, վե՞վ կըրնը էրթըր, օձերը ի զիս կը խեթեն:

Հերսոտավ հեքիմպաշին, բերեց ավճի Փուրթոյին կապեց սեռնը ղազազ թելմ' էլ ըրըց, օր չը կըյրի. բերեց, կապեց ճակատը, պաշլայեց աշուղ պուրղուսու տալը:

Ավճի Փուրթոյին մի ձեանը էրկինքը էլավ, մի ձեանը գետնի յոթը ղաթը էջավ: Հեմել եաղլաթմիշ ըրըց, օլըրեց: Սարսափելի կը պոռար, հո-գին կը նվաղքեր: Կըյրեցին ակընճվընին, աղ ու բաճ լեցոցին տեղը: Օրը տրեմ մի միս կը փրձընեին Փորթոյեն - շատ չարչարանք տվին: Էլավ ավճի Փորթոն հոգու կսկըծուն շաշխանան դրըց փեճը, գընըց դեպի Շահ Մարար թագավորին: Աստուծո հեռքմեթովը մաղարին օ մոտեցավ՝ տասը հատ ճերան զարկեց, քաշեց, նետեց ներս, գլոխ տվեց թագավորին:

Թագավորը էան սահաթը մտքեն անցոց. ըսըց. - Քեզ օ չչարչարեին՝ ես Աստուծո առաջ քեզ զավակ իմ ըսեր, ընոր համար տի գամ, վախտս

տարաժամ է: Պարկան, էլան ընկան ճանփա, առավոտնու գըցին: Տղան ընկավ առջին, թագավորը՝ ետին, կէրթային:

Էաղ էրկիրը ինչ ղտի օձ կար, պիթուն էլան, քյումեով էտին շարվան, թագավորը ձեռոք ըրըց, պիթուն էալ ետ դարձան: Ըսըց օձերուն. - Քանի օր իմ ճանփած հետիյես կուգա ձիզինե. տեղաննուդ մի՛ խախտըվիք. մի տարուն սորա օր իմ պարգևս չէկավ նը, էան էալ իմ գիտցած բանն է:

Էլան ընկան ճանփան, էկան: Չաթ, ճանփան հասան:

- Նավրուզ լեառան էրթըք, Փուրթո:

Հասան Նավրուզ լեառը, ծաղկնուն մեջ մի սահաթ մընըց լեառը, անուշ-անուշ ծաղկընուն հոտը էկավ:

Թագավորը գճկավ, ծաղկեն կըյրեց, Նավրուզին մի ծաղիկ տվեց Փուրթոյին. - Կըլա՛, մի՛ ծամեր, Փուրթո՛:

Չորս նրճեզ ծաղիկ էալ տվեց Փուրթոյին. - Արդաներդ չպտե զինիս ծաղիկին. տի կլաս:

Առավ հինգ քոք պալասան ծաղիկ. օ էնոր հոտուն պես աշխարքը չգտնվիր: Ըսըց Փուրթոյին. - էաս պալասան ծաղիկնին կը լընըս ճեվզեին մեջ, կէփիս, իրեք եփ կուգա, կը խմես անոթի փորուն. էաղ օ խմեցիր անոթի փորուն նը, հեր մե ծաղկի, խոտի քով էրթըս նը, քեզի հետ կը զրուցին, թե՝ ես էս ցավին, եարային դեղ իմ:

Ծաղկընուն անցան, գըցին. նստան քարի մի տակ: Շահ Մարարն ըսըց. - Փուրթո, ըս քարին վրու քարաքոսն էալ տի առնիս, պալասան ծաղկին հետ տի իրար խառնիս, խմիս: Քարին ծուծը առ ծեծե, մերդի հետ էփե, խմե. էան վե՛վ օ խմե՝ մեջքը ցավի նը, կը ժրացնե:

Գըցին, գիշերը Փուրթոյին տունը հասան, էփեցին պալասան ծաղկին հետ քարաքոսը ու քարին ծուծը: Նարվիզ ծաղիկն* խմեց անոթի փորուն:

- Դե, - ըսըց, - սահաթ մի պարկի՛ր:

Պարկավ, քնացավ, էլավ նստավ: Ըսըց թագավորը. - Փուրթո՛:

Փուրթոն էրեսնի վեր հայավ:

- Ի՞նչ տեսար, բան մի ստացա՛ր, ես ինչո՞ւ դեղ իմ:

- Թագավո՛ր ապրած, չորս ծուծ ունիս գլխուդ մեջ, ըսդինը տասնը՝ աղու է՝ աման-զաման չտար, կը վերջանա. չոլախ թարավինը էան լմանը. էրկու մեջ տեղինը տասնը՝ կը սաղնա:

Փուրթոն խմեր էր ծաղիկը, վյան իմաստութին էկեր էր:

---

* Երկու կանգուն բարձր թուփ է, փայտը մոխրագույն է, սպիտակ ծաղիկ ունի (ծ.բ.):

- Փուրթո՛, - ըսըց Շահ Մարար, - ինձիս եոթ տարվա կարմիր գինի կը խմցնիս անոթի փորուն, լավ կշտով մի կը խմիմ կուշտ, ես օ պարկա, ձեառքս կը կապես, դանակդ սուր կինիս, ինձիս կը մորթիս, գլոխս կառնիս, կը դնես դեն. մարմինս էալ հող ու գերեզման կինիս*, օձերուն էալ թագավորական թային կը կապես. օ էնոք գիտնան, թե ես սաղ իմ, արմաղան չէրթա նե իմաց կըլլին, աշխարքը կանցընին:

Խմեց եոթ տարվա գինին, գլխուն խելքը գընըց. բերեց ձեառքը կապեց, դանակը սուր ըրըց, վրան գրեց**, բերեց գլոխը ճեղքեց:

Եահուդին էկավ. - Հա, Փուրթոն, հա՞զր է, էփե՞ր ես:

- Չիմ էփեր:

- Էփե, տե, առ էկո:

Փուրթոն գլուխը ճդքեց օ գինու նիթը քաշեր, գըցեր մեջ տեղի ծուծին խառնվեր է, բերեց էփեց, եոթնեն մե մի կայնեցոց, լցեց սիպտակ շուշի մի մեջ: Մեկեալ աղուն էալ էփեց, լցեց իրեք շուշի մեջ:

Փուրթոն է, գընըց թագավորին քով օ, եահուտին նստեր է վերդին, բերեց էջոց եահուտուն առաջ:

Եահուտին էալ էան ծաղկընուն կերեր էր. իրեք շուշին էալ հոտ առավ, ամա գինու նիթը օ գըցեր՝ խառնվեր էր ծուծին, չճանչցավ, մի ֆինճան էրկնցոց թագավորին. - Խմե, - ըսըց:

Թագավորը ըսըց. - Կեսը դո՛ւ խմե:

Եահուտին առավ օ խմե կեսը, փորը չէրթածտան պատռավ, էրկու շախա էղավ, ձենոտավ թյուֆենկի պես:

Թագավորը հոտ զարմանք մընըց, ըսըց. - էա՞ս էր քու հեքիմութինդ, հեքիմ պաշի:

Եահուտին սատկավ:

Ավճի Փուրթոն մեկալ շուշեն բերըց. ինք խմեց, թագավորին էալ տվեց, սաղցավ, էլավ վեր:

Ավճի Փուրթոն էղավ հիմա հեքիմ պաշի, ուր օ գընըր, «Լոխման հեքիմ» կըսեին:

- Հեքի՛մ պաշի, մուրազդ ուզե, - ըսըց թագավորը:

Շահ Մարարին գոտուն ի վեր կըյրեր՝ առեր էր Փուրթոն, գընըց բերեց, թագավորին սալղցոց:

Թագավորը տեսավ, զարմանք մընըց. - Դու ինդո՞ւր բերեր ես:

---

* Շատ տեղեր տեսած եմ օձը սպանելեն հետո անպատճառ պիտի հորեն, եթե դուրս մնա, աստղերն ամբողջովին կը համարե, կու սաղնա (ծ.բ.):

** Շահ Մարարին գերեզմանը հիմա ևս կա, կասեն (ծ.բ.):

- Լսին օ Շահ Մարարին մորթեր իմ, մաղի պես իրուր վրա զարկը-մուն է օձերը, վեց օր օ թային չէրթա, էրկիրդ կանցընին:

Օձերուն թայինը ճիկեր թոփեցին: Լոխման հեքիմ օր ըսըց, չտարան:

- Հեմ տեղը չենք գիտեր, հեմ կը վախիք, - ըսին:

Տաս օր մընըց, չկրցան մարդ գընայի, օ տաներ:

Էաս քաղքի միջուն էղած օձերուն՝ օձ մի ճաղպվեր՝ գընցեր էնոց մեջ ըսեր էր՝ «ձեր թագավորը մորթեցին»:

Մաղ գարկմուն էր, օձերը քանկտվան. էաղ քաղաքի մարդիկը խեղեցին, պանեցին, քաղաքը* անցոցին:

Խապար տվին թագավորին. «Օձերը սիրական քաղաքդ անցոցին»:

Մալդ չմընըց, կանչեց հեքիմ պաշին. - Դըվոր շարեն:

Հեքիմ պաշին ինք բարձավ քառսուն բեռ ճիկերը, անգին քարե թեզպեյ մը ուներ Շահ Մարար, առավ իրան վրան: Օձերը տեսան թեզպեյ կա, ըսին. - Շահմարն է, թափվան, ընկան տղին հետ, գընցին էլան մաղարան:

Տղան օ տեսան, ըսին. - Ըսի մեր թագավորն է:

Լոխման հեքիմ տեսավ, օ օձերը քաղքի մարդոցը խերած, ճիկերնին կերած են:

Դատաստան ըրըց. էան սուտ ըսող օձը բռնեցին, խեղդեցին պանեցին: Հեքիմ պաշին իրեք օր հոն կեցավ, էրթըլու էղավ, ըսըց օձերուն. - Քանի օր ձիգի հետիյե կուգա, տեղաննուդ մի թնդաք:

Հեքիմպաշին քանի օ սաղ էր, ճիկերը կը ճամփեր, հիմա էալ ժողովուրդը կիրակեց կիրակի կը ճանփե:

Հեքիմպաշին անըվավ. էղավ Լոխման հեքիմ. մարդ օ մեռնիր, կէրթըր կը սաղցըներ. էան շիշեն պեյեր էր. եոթը տարի մարդ չմեռավ:

Մի կնիկ ամեն օր կէրթըր, Լոխման հեքիմին լաթերը կը վլանար, ավուր մեկը գընցեր էր վլացք. իրան տղան օ աղկեկ ու սիրուն էր, էկավ մորը քով, ձեառնը տվեց, մորը ճեպեն բանլին առավ, գընըց:

Լոխման հեքիմին կնիկը էաս օ տեսավ, հարցոց. - Էդի վե՞ր նե օ բան չխոսաց, բանլին առավ գընըց:

- Ի՞նչ կըլլի, հեքիմպաշիին խնդիրք կինիմ օ իմ տղան աշկերտ առնե քովը՝ լալ է:

---

* Այժմ Իլան Կեչորեն կասվի այս վայրին, որ գյուղ մ'է (ծ.բ.):

Հեքիմն օր տունը էկավ, իրան կնիկը զրուցեց. - Մեր դրացինը օ միզի վլացք կինե, ընոր տղա մի կա. քովդ աշկերտ առնես, համի լալ է, համի սադր:

Կնիկը գընընց, տղան առավ էկավ, տղան վարպետին ձեառքը պագեց..մեարը թողեց գընընց:

Տղան մի ամիս ղադար մընընց. մի ամսուն էտև Լոխման հեքիմ ըսըց իրան կնկան. - Կնի՛կ, էաս տղան նե սաղր է, նե լալ. էտանկ կը լմանի:

Լոխման իրան այտին էր, իմաստուն էր. գիտցավ օ լալ չէ, ըսըց. - էզեյեթըմ տամ տղին օ քովս չկենա:

Բերեց, թասը կարմրցոց կրակին մեջ, ձգեց գլխուն վրա. տղան պաշլայեց լացը՝ ա՜ ա՜ ա՜, կինե. լեզուն չդարձըներ:

Կնիկը ըսըց. - Մի չարչրեր, լալ է:

- Իլլահի լեզու ունի քի ունի, շան տղուքին կինե:

Բերեց, քեպապին շիշը նետեց կրակը, կարմրավ, զարկեց ըսդի ականջեն ընդի ականջը, ավլա լեզուն չէր դարձներ: Կնիկը ըսըց. - Խեղճ տղին ինչո՞ւ էզիյեթ կինիս:

- Կնի՛կ, լեզու ունի եոր, ունի:

Ականջը ու թասին եարան իրեք ավուր մեջ սաղցոց, բերեց կապեց սեռնը, քելփելթիով օրը հինգ տրեմ միս կօլըրեր, կը փրցըներ. ավլա ա՜ ա՜ ա՜ կիներ: Կնիկը ըսըց. - Խեղճ տղան մի չարչաչեր:

- Կնիկ, իլլահի քի լեզու ունի եոր, ունի:

Շատ չարչարանք տվեց տղին, լեզուն չկըրցավ դարձըներ. հեր ուր որ ղրկեր, գործ կը կատարեր, կը դառնար. Լոխման կուզեր օ տղան իրան քով բան չսորվի:

Եոթը տարի տղան մնընց Լոխմանի քով:

Մի զենկին հերիֆին մեկը, գիշեր-ցորեկ գլոխը կը ցավեր. իրեք ամիս հեռու ճանփա էր, Լոխման հեքիմին անունը լսեց, հարցոց, էկավ գտավ. Լոխման հարցոց. - Ի՞նչ է ցավդ:

- Գիշեր-ցորեկ գլխուս ցավը չկըյրիր:

Դընվնին կղպեց, առավ էջավ դեորդեն, դուռը կղպեց, հերիֆին շերպեթ մի տվեց, մարդը մեռավ. բերեց մարդու գլխու թեփեն դանակով խոլոփիկ կըյրեց, հանեց, տեսավ գլխուն մեջ ուբ ճռնե ճանգլոտ մի ճանավար, հեր ինդուր ըրընց՝ քսանը չորս սահաթ աշխատավ, չկրցավ բռներ էր, օ գլխուն միջուն հաներ. բերընց խսղանեն, նետեց օ քաշե, թոփավ, էջավ վեար. քերփելթիով կը սղմեր նը՝ չէր կրնըր բռներ, կինե կէջնար վեար, քերփելթուն նետեց. մաշան առավ, իրեք հեղ նետեց, չկրցավ բռներ էր. էարինե քրտինքի մեջ մընընց:

Լոխման էաս ղտի հեքիմութին կիներ, էտանկ բանի ըռաստ չէր էկեր: Վերևը դուռ կա, տղան գողտուկ կը հայի, չհամբերեց. - Վարպե՛տ, մաշան կրակը նետե, - պոռաց, - թող կարմրի, զինելու քիմի կը թոփվի, կը քաշես, կը հանես:

Նետեց կրակը օ կարմրի. քրտինքը էջավ թոփուղը, չպողը լեցոց, դեորդեն պաշլայեց ոլթա զինիլը:

- Կնի՛կ, դեիմա կըսեիր լալ է, ի՞նդուր էղավ, պոռաց:

Տղան վերի դռնով փախավ, գընոց իրան տունը:

Տղան հայավ, տանը իրեք հատ դետետեն գալմա պղինձ ունեին. հատը չարեկ* մի կառներ. տկու պղինձը կաթ լցեց, վրու պղինձը՝ գինի, օրթըլըխի պղինձը չոր թողեց. մտավ մեջը, նստավ:

էան թող նստի:

Լոխման սաղցոց, հերիֆը ճանփու դըրոց. էլավ վերևը:

- Կնի՛կ չրաղը ո՞ւր գընոց:

- Քու քով էր, ես ջուրը գընցի:

էլավ Լոխման հեքիմ ըսոր-ընոր փարա տվեց. - Վեվ օ չրաղս գննա, ընոր հեքիմութինս կը սորվեցընեմ:

Աշխարք օլրտան, չկրցան գտեր էին: Քառսուն քեսի ծի մը առավ. ինք իր տունը կուգային. կը սաղցըներ. հեծավ քառսուն քեսի ծինը. բոլոր աշխարքը օլրտավ, տղան չկրցավ գտեր էր:

Քառսուն տարվա սորա էկավ տունը:

Իրան գրած թուղթ ուներ, Շահ Մարար գրած: Ըեմ նետեց, տեսավ օ Կարմիր ծովուն, ճերմակ ծովուն մի եաթաղի նստելու տեղ կա չոր, տղան հոն նստեր է:

Խայեխներ սեապեց. կեմիստաննուն փարա տվեց:

- Գընե՛ք, ըդ տղան Կարմիր, ճերմակ ծովուն օրթըլըխ ատան նստեր է. առեք, էկեք:

Կեմեճիստանը առին միլիոնով փարան, ծովերուն վրա օլրտան, չոր չտեսան, տվին եանկինը:

Լոխման էլավ, գընոց աշկերտի մորը քով:

- Հարիր քառսուն տարվա գընցի ես. ըեմ կը նետեմ. Կարմիր ու ճերմակ ծովուն օրթալախը մի չոր կա. տղադ էան տեղեն բերել տուր, - ըսոց:

Էրդում էալ ընոց. - Տղուդ բան չիմ ինիր:

---

* զ խալվար (ծ.բ.):

Մեարը, պղինձնին վեար առավ, միջուն հանեց:

- Որդի՛, դու ինձիս ծերացուցիր, աշխարքը օլրտա, հարիր քառսունի գընոց տարիս, մեռնիմ նե, հեքիմութինս աշխրքի էրեսեն կը ստի, անունս կը կորի:

Տղան էլավ, վարպետին ձեառքը համբուրեց. մեկ-մեկ մնկա գինի խմեցին:

Լոխման հարիր քառսուն տարի էր, վեվ օ մեռներ՝ կը սաղցըներ, տղան տահա չէր տեսեր՝ ինդուր կը սաղցըներ, ուր օր ծեր մարդ մի կար՝ կը կենճըցներ, տասնըհինգ տարվա տղա կը շիներ:

Տղին ըսըց. - Պղինձը դիր վրան, ինձիս շերպեթ մի տո՛ւր, ջուրը կը տաքցնես, կեռա, քառսուն սահաթ պղինձին ջրին մեջ կը մնամ. բերանը կը բանաս, ինձիս միջուն կը հանես, հինգ լիր բանբակ կը շիտկես խալիին վրա, մեկ մարդու մի կեորեի տեղ կը շինես, կը բերես, էաս շուշի ջուրը կը խառնես. հինգ պուտ կը լեցընես, կէփես, եոթնեն մե մի կայնի ջուրը:

Տղան էան լմանը ըրոց. ջուրը պաղավ, էղավ մեռելի ջուր, բերոց բանբակի վրա լոգցոց. մեկեալ չոր բանբակը շտկեց վրան, եոթը սահաթ մնոց, էտև բերեց, լնա բերան ի վեար. ֆինճանը առավ, չառավ, Գաբրեր հրեշտակ գարկավ, թափեց, մի տամլա գընոց պողագնի վեար. օ մի տամլան գընոց, քիչ մը հոգի առավ, կըսեր. «թեոք, թեոք, թեոք»*:

Ըս տղան տարավ իրան վարպետը Շահ Մարարին քով, հող ու գերեզման ըրոց:

Կը պառկեր, չէր քընանար. իրան վարպետին «թեոք, թեոք, թեոք» ձեանը ակնջեն չէր կըյրիր: Մի դարի դատար՝ գիշեր, ցորեկ քուն չէր ըլլիր միշտ «թեոք, ...» կը լսեր:

Աշխարքը օտք քաշեց**. հեր ուր կէրթըր, չէր քնանար, վարպետին ձեանը ականջեն չէր կըյրեր:

էջավ մենծ տուն մի, էրկու վարդապետ, մի տերտեր, մի էկսպոկոս ու էան տանը մեջ հարիր գլոխ մարդեն ավելի մարդ կար:

Տղան վեց օր կեցավ հոտ. էրեսվընին չէր խնդար տնեցոց:

- Հայ՛ր սուրբ, ինչո՞ւ էրեսվընիդ չխնդար, - հարցոց տղան, - էկր ինձի համար է, ես կէլլըմ, կէրթըմ:

- Որդի՛, չէ, մի հարս ունիք, էաս ղտար մարդը մի դի, էան հարսը մի դի. իրեք օր է ցավ կը քաշե, շատ հեքիմներ բերաք, նե կը մեռնի օ խալըսի, նե կաղեկնա. իրեք օր է, գիշեր-ցորեկ կը պոռա:

---

* Լից, շուտ արա (ծ.ա.):

** Աշխարհի երեսն ամեն տեղ շրջեցավ (ծ.ա.):

- Ատանկ է նե՝ ինձի թեզ խապար տայիք:

Գընըց. էան սահաթը սաղցոց, հարսը բերեց տղա մի:

Տասը օր էաս տղան թող չտվին, պախշիշը տվին. հեքիմը կնքապապ էղավ տղին. տարին ժամը, մկրտեցին, էկավ իրկունը պարկավ:

Քսանը հինգ տարի էր քուն չէր ըլլիր, քսանը չորս սահաթ քունը տարավ: Լոխմանի ձեանը կըյրեցավ:

Էլան հեքիմը առոք փառոք դրին ճանփու, էկավ մորը քով: Մեարը կարգեց էսոր, եոթ օր, եոթ գիշեր հարսնիք ըրըց:

Վարպետին ձեանը ականջեն կըյրավ:

Գնըց դայվե մի, միսաֆիր էղավ: Աշղներ գիտցան օ Լոխմանի աշկերտն է հանելուկ ըսին իրարու:

- Ես էալ ձեզի բան մի ըսիմ, - ըսըց հեքիմը:

- Դու Լոխմանի աշկերտն իս, մեք քիզի հետ կրնը՞ք գլոխ էլլըր:

- Ես ձեր սազը չպտե սառնիմ, ձեր փարին էալ էիտաճ չիմ, - պաշլայեց կենկեզնալը:

Այն ո՞վ է՝ ջրի մեջ չթրջիր,
Այն ի՞նչ է՝ երկի մեջ չժանգոտիր,
Այն ի՞նչ է՝ հերկինս կորոտա,
Այն ո՞վ է, երկրի խորը կը մղկտա:

Չեն կարող պատասխանել, ինք կասե.

Այն բադն է՝ ջրի մեջ չթրջիր,
Այն ոսկին է՝ գետնի մեջ չժանգոտիր,
Այն ամպն է՝ հերկինս կորոտա,
Այն Լոխմանն է, երկրի մեջ կը մղկտա: